

ԳՐՔԵՐՈՒ ԿԱԶՄ, ԿՈՂՔ, ՊԱՀԱՐԱՆ,
ՇԱՊԻԿ, ՃԱՐՄԱՆԴ, ԻԶԱՑՈՅՑ ԵՒ ՓԱԹԻԹ

Գրչազիր հատորներու կազմի մէջ զբքին կողքը սակերչական բանուածքով մը ծածկելը՝ աւելի քան նոր ժամանակներու փղոսկրները՝, միջին դարու ամենատաղին տարիներուն դեռ յարզի նորոյթ մը կը համարուէր:

Գրչազիր հատորները կազմելու ատեն անոնց կողքերը թանգ մետաղով, փղոսկրով, կաշիով հագուեցնելէ ետք՝ մենք կը տեսնենք դործուած կտորեղէնը՝ թաւիչ, դիպակ, ազլաւ, որ շատ անգամ նաեւ ասեղնագործուած են ծաղիկներով:

Մեր վանքերու հաւաքածոներուն մէջ կը պատահինք այս կարգի կազմերով կողքերու, որոնց վրայ պատկերացուած են սուրբեր, հըրեշտակներ եւ կրօնական կարգի այլ բաներ:

Ասոնց մէջ հագուազէպ չէ տեսնել, որ ասեղնագործ բանուած ծաղիկներուն աւելի կենդանութիւն տալու համար զեռեղեր են մարդարիտներ, բուստ եւ այլ քարեր:

Մեր մեծ վանքերու հաւաքածոներուն մէջ պահուած այսօր աւելի քան 20,000 գրչազիրներու կազմերուն մէջ՝ կաշուի վրայ, վայտի վրայ, փղոսկրի վրայ՝ բանուած դրուագները գեղարուեստական անգնահատելի յուշարձաններ են: Այս բոլորի մէջ մենք կը տեսնենք հայ ՈՍԿԵՐԶԻ, ԳՈՀԱՐԱԳՈՐԾԻ, ԱՐՁԱՆԱԳՈՐԾԻ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԻ, ՓՈՐԱԳՐԻԶԻ շնորհք՝ միացած հայ ԿԱԶՄԱՐԱՐԻ դիտութեան:

*

Թանկազին մետաղով պատեանած հայ գրչազիրներ եղած են կատարեալ ՄԱՍՆԱՏՈՒՓԵՐ, երբեմն մէկէ աւելի աչքբարձիւններով:

*

Գրքի կազմին մէջ կողքի հագուաւոր եղող կաշիներն ալ ներկուած են զանազան դոյներով:

*

Գրքի կողքերու անկիւններուն ինքն իր վրայ ծալուած կաշիին հագցուցած են ՄԵՏԱՂԵԱՅ ԱՆԿԻԻՆԱԿԱԼՆԵՐ. իսկ կողքի բովանդակ երեսին վրայ՝ իրարմէ հեռու զեռեղած են ԿՈՐՆԹԱՐԻ ԳԼԽԵՐՈՎ ԲԵՒԵՌՆԵՐ:

*

Գրեթէ միշտ՝ կողքի երեսին կաշիին վրայ ճնշմամբ պատկերացուցած են դժապատկերի մօթիւլներ:

*

Գրքերու կազմին կարեւորութեան հետ ինամբի առարկայ եղեր է նաեւ՝ զանոնք դոյ պահելու համար՝ պինդ կառչող ՓԱԿԱՐԱՆՃԱՐՄԱՆԴԸ: Փակարան-ճարմանդներ՝ ծըխնիաձեւ եւ մետաղեայ՝ յարմարցուցած են, ըստ ծաւալի եւ ծանրութեան զբքին, մէկէ աւելի: Այս ճարմանդներէն զատ կան ՊԱՏԱՏՈՂ ԺԱՊԱԿԷՆՆԵՐ, որոնցմով միշտ կապկպած պահեր են հատորները:

Ճարմանդները երբեմն զարդարուած են քանդակներով եւ նոյնիսկ թանկագին քարերով:

*

Գրքերու ընթերցանութեան պահուն ուղուած էջը նշանակած պահելու համար կան իջացոյցներ (signet), զորս շարժական գործածեր են:

Պատահեր է որ շարժական այս նշանակիչներու բազմութիւնը՝ թելերու ամբողջ մէկ տրցակի ծայրին յարմարցուցած՝ մետաղեայ կոթին միացուցած են: Մետաղեայ այս կոթը՝ շատ անգամ վարպետօրէն քանդակագործ զբքէն դուրս կը մնար...:

*

Կան ՇԱՊԻԿՆԵՐ, ՏՈՊՐԱԿԱԶԵՒ ՓԱԹԻՈՅՆԵՐ, ամէն տեսակ կտորներէ եւ ամէն կերպ ու աստիճանի ասեղնագործ դրուագներով:

*

Գրչազիրներու կազմին կարեւորութիւնը ստիպել է մարդիկը խորհիլ եւ հոգալ. անոնց համար մասնաւոր արկղաձեւ պահարաններ շինել տուեր են: Ասոնք ալ՝ իրենց կարգին՝ այնքան խնամով շինուած են, ինչպէս գոհարեղէնի պահարան-մասնատուփերը:

ԳԼԽԱՏԱՌ

ԳԼԽԱՏԱՌԵՐԸ, բացի սովորականէն տարբերուող իրենց խոշորութեան ու կազմի կերպաւորումէն, շատ անգամ եղած են ամբողջ